

«ԵՐԵՎԱՆ ՄՈՒ» ՍՊԸ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

2025թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱՀԱՄԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարության հայտարարությունը 2025թ. դեկտեմբերի 31-ին ախարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ հաստատման պատասխանատվության վերաբերյալ...	3
Անկախ աուդիտորի եզրակացություն...	4
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	10

**ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏԱԾ ՏԱՐՎԱԾ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարությունը պատասխանատու է «Երևան Մո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և գույք ակտիվներում փոփոխությունների մասին ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՓՄԿ-ի ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝
- ✚ Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
 - ✚ Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
 - ✚ Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Ընկերության ֆինանսական վիճակի մասին,
 - ✚ Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:


Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- ✚ Ընկերությունում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- ✚ Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ներին,
- ✚ ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- ✚ Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար,
- ✚ Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2025թ. հունիսի 22-ին:

Տնօրեն՝

Վ. Սեկոյան



2026թ. հունիսի 22

Երևան, Հայաստանի Հանրապետություն

Գլխավոր հաշվապահ՝

Ն. Մանուկյան



«ԷյՋ ԷՄ աուդիտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ազատության նրբանցք 7/5,
Հեռախոս +37498098041
ՏԳՀ. ՀՀ, ք. Երևան,
Քաջազնունի 1 Ա.

“HM audit” LLC
Azatutyan 7/5, Yerevan, RA
tel: +37498098041
AEA: Qqjznuni 1A
Yerevan, RA

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Ներկայացվում է «Երևան Մոյ»
սահմանափակ պատասխանատվության ընկերության մասնակիցներին*

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևան Մոյ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-Վարքագիր) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվության վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը տրամադրվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից գերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության

գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացությունը:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- ✚ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ✚ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- ✚ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- ✚ եզրահանգում ենք դեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- ✚ գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Բ. Երևան

2026թ. հունիսի 22

Տնօրեն -առաջադրանքի ղեկավար

Ա. Միխայրյան



Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«Երևան Մոլ» ՍՊԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ

	Ծան.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	5	5 843 106	5 539 654
Վաճառված ապրանքների ինքնարժեք	5	(113 697)	(113 551)
Ծառայությունների մատուցման գծով ծախսեր	6	(2 143 793)	(2 174 153)
Վարչական ծախսեր	7	(1 030 955)	(1 065 985)
Այլ եկամուտ	8	2 428	5 472
Այլ ծախսեր	8	(23 792)	(53 657)
Ֆինանսական եկամուտներ	9	-	4 642
Ֆինանսական ծախսեր	9	(125 528)	(146 833)
Այլ օգուտ (կորուստ)	10	49 662	45 334
Զուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը		2 457 431	2 040 923
Շահութահարկի գծով ծախս	11	(485 264)	(376 607)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		1 972 167	1 664 316
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1 972 167	1 664 316

Տնօրեն

Վ. Մեկոյան

Գլխավոր հաշվապահ՝

Ն. Մանուկյան

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. հունիսի 22-ին:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 10-26)

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Երևան Մոլ» ՍՊԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ

	Ծան.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՎՏԻՎ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	12	263 773	121 118
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	629 412	656 445
Դրամական միջոցներ	14	275 039	298 009
Բանկային ավանդներ		70 000	-
Այլ ընթացիկ ակտիվներ		6	890
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		1 238 230	1 076 462
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	15	8 921 413	9 192 152
Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ		198 274	24 751
Ոչ նյութական ակտիվներ	16	95 049	106 076
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	17	-	844
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		9 214 736	9 323 823
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՎՏԻՎՆԵՐ		10 452 966	10 400 285
ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	18	283 104	290 702
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	19	577 670	997 724
Պահուստներ	20	228,201	222 778
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		1 088 975	1 511 204
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	18	1 132 418	1 471 941
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	295 829	224 278
Վարձակալական վճարների գծով ստացված ոչ ընթացիկ կանխավճարներ	19	106 986	86 271
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		1 535 233	1 782 490
Սեփական կապիտալ			
Համալրված բաժնետիրական կապիտալ	21	156 674	156 674
Էմիսիոն եկամուտ	21	5 531 529	5 531 529
Զբաղիված շահույթ (չծածկված վնաս)		2 140 555	1 418 388
Ընդամենը սեփական կապիտալ		7 828,758	7 106 591
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		10 452 966	10 400 285

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ10-26)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

«Երևան Մոլ» ՍՊԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ

	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Զբաղիված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը
2024թ հունվարի 1-ի դրությամբ	156 674	5 531 529	1 774 072	7 462 275
Ծառունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	1 664 316	1 664 316
Ծախսաժիններ	-	-	(2 020 000)	(2 020 000)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	156 674	5 531 529	1 418 388	7 106 591
2025թ հունվարի 1-ի դրությամբ	156 674	5 531 529	1 418 388	7 106 591
Ծառունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	1,972,167	1,972,167
Ծախսաժիններ	-	-	(1 250 000)	(1 250 000)
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	156 674	5 531 529	2 140 555	7 828 758

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (ԼՋ10-26)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Երևան Մոդ» ՍՊԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ

	2025թ դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2024թ դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	298 009	417 728
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հանախորդներից ստացված դրամական միջոցներ	7 042 698	6 589 331
Այլ մուտքեր	27 660	1 227
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(732 009)	(960 208)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(2 551 591)	(2 317 721)
Վճարումներ բյուջե	(1 617 601)	(1 290 006)
Այլ վճարումներ	(83 120)	(88 389)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	2 086 037	1 934 234
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումների գծով վճարներ	(4 899)	(87 987)
Բանկերում տեղաբաշխված ավանդներ	(70 000)	(930 000)
Բանկերում տեղաբաշխված ավանդների մարում	-	934 652
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(74 899)	(83 335)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	203 000	-
Վարկերի և փոխառությունների մարումներ	(612 340)	(366 133)
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	(1 625 000)	(1 599 771)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(2 034 340)	(1 965 904)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	(23 202)	(115 005)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	232	(4 714)
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	275 039	298 009

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընդօրոգրվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 10-26)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«ԵրևանՄո» ՍՊԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Կազմակերպությունը

«Շին-Տավր» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը, (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է «Արաքս Գոլդ» առևտրաարտադրական համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության առանձնացման ճանապարհով վերակազմավորման արդյունքում և հանդիսանում նրա իրավահաջորդը: Ընկերության կանոնադրությունը գրանցվել է 14.09.2007 թվականին, գրանցման թիվ 222.110.00825: 18.01.2018թ կանոնադրությամբ կատարված փոփոխությունով «Շին-Տավր» ՍՊԸ-ն վերանվանվել է «Երևան Մո» սահմանափակ պատասխանատվության ընկերության:

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 34/3:

Ընկերության կառավարման մարմիններեն՝ մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության տնօրենը:

2025թ Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 163 մարդ, իսկ 2024թ՝ 158 մարդ: Ընկերությունը վերահսկվում է հետևյալ անձանց կողմից՝

• «ԱԳՌ Ռեալ Լիմիթեդ» ՍՊԸ	30 %
• «Էրմոլիասերվիսիզ» ՍՊԸ	20 %
• Վազրիկ Սեկոյան	30 %
• Ռաֆայել Մանուչարյան	10 %
• Ռուզաննա Թամազյան	10 %

1.2 Հիմնական գործունեությունը

✚ առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեություն

✚ կինոդիտումների և ժամանցային այլ գործունեություն

Գործունեության համար ՀՀ էկոնոմիկայի նախարարի 06.09.2013թ համար 809-Ա հրամանով տրվել է առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության թիվ 000124 համարի լիցենզիա, որի գործունեությունը անժամկետ է:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ի ՖՀՄՄ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կատարվելու ժամանակաշրջանում:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն, երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Հիմնադրամի մտադրություններին համապատասխան: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացառությամբ, եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են.

<i>Շենքեր, շինություններ</i>	<i>20-50 տարի</i>
<i>սարքավորումներ</i>	<i>5-8 տարի</i>
<i>արտադրատնտեսական գույք</i>	<i>5-8 տարի</i>
<i>հաշվողական և համակարգչային տեխնիկա</i>	<i>1-5 տարի</i>

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

<i>Համակարգչային ծրագրեր</i>	<i>3-10 տարի</i>
------------------------------	------------------

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը, որը չափվում է որպես օտարումից գուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

3.3 Ներդրումային գույք

Ընկերությունը ներդրումային գույքը սկզբնական ճանաչման պահին պետք է չափի իր ինքնարժեքով (սկզբնական արժեքով): Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում, օրինակ՝ իրավաբանական և բրոքերային ծառայությունների դիմաց վճարները, գույքի փոխանցման գծով հարկերը, ինչպես նաև գործարքի հետ կապված այլ ծախսումներ: Եթե վճարումը վճարման սովորական պայմաններում նախատեսված ժամկետներից հետաձգվում է, ինքնարժեքը ապագա բոլոր վճարումների ներկա արժեքն է:

Ներդրումային գույքը, որի իրական արժեքը կարող է արժանահավաստորեն չափվել՝ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է չափվի իրական արժեքով՝ իրական արժեքում փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում: Ընկերությունը բոլոր այլ ներդրումային գույքը պետք է հաշվառի որպես հիմնական միջոց՝ կիրառելով ինքնարժեք-մաշվածություն-արժեքը կում մոդելը:

3.4 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկա ներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.5 Դրամական միջոցներ և համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկի հաշվարկային հաշվում ունեցած միջոցները, ինչպես նաև երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ ընթացիկ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

3.6 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների հնարավոր իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

3.7 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց գեղջման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

3.8 Հասույթ

Ընկերության հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրական գեղչերի, ժամկետից շուտ վճարման գեղչերի և քանակային զիջումների գումարները:

Ընկերության հասույթում պետք է ներառի ստացված կամ ստացվելիք տնտեսական օգուտների միայն այն համախառն ներհոսքը, որը պատկանում է տվյալ Ընկերությանը: Ընկերության հասույթում չպետք է ներառի երրորդ անձանց անունից հավաքագրված բոլոր գումարները, օրինակ՝ վաճառքից հարկերը, ապրանքների և ծառայությունների գծով հարկերը և ավելացված արժեքի հարկը:

3.9 Զնորհներ

Ընկերությունը որպես շնորհի հաշվառում է հիմնադրից ստացված միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով:

Զնորհը չի ճանաչվում, քանի դեռ կա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից պայմանները և, նոր շնորհը ստացվելու է:

Զնորհները ճանաչվում են որպես եկամուտ սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Ընկերությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Զնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Ընկերությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.10 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, Ընկերությունը պետք է այն չափի գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները):

Ընկերության ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

3.11 Ակտիվների արժեզրկում

Արժեզրկումից կորուստը առաջանում է, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը: Ակտիվի փոխհատուցվող գումարը դրա իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է:

Իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները, ակտիվի վաճառքից ստացվող գումարն է՝ իրագել և պատրաստակամ կողմերի միջև «անկախ կողմերի միջև գործարքում»՝ հանած օտարման ծախսումները:

Օգտագործման արժեքը ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքն է, որն ակնկալվում է ստանալ ակտիվից:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Ընկերությունը պետք է գնահատի ակտիվի փոխհատուցվող գումարը: Եթե արժեզրկման որևէ հայտանիշ չկա, ապա անհրաժեշտ չէ գնահատել փոխհատուցվող գումարը:

Ընկերությունը արժեզրկումից կորուստը պետք է անմիջապես ճանաչի շահույթում կամ վնասում:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի հնարավոր է, որ նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը այլևս գոյություն չունի կամ նվազել է:

Ընկերությունը արժեզրկումից կորուստի հակադարձումը անմիջապես պետք է ճանաչի շահույթում կամ վնասում:

3.12 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Չեղձման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամուտորեն գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

4. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Անընդհատության սկզբունք

Ղեկավարությունը պատրաստել է այս ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա: Այս դատողությունը կատարելից ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական վիճակը, ընթացիկ մտադրությունները, գործառնությունների շահութաբերությունները և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը:

Ընկերությունը որոշակի գնահատումների հիման վրա ունի տեսանելի ապագայում անընդհատ գործելու ողջամիտ երաշխիք

Առևտրային դեբիտորական պարտքերի վճարունակության ակնկալվող կորուստները

Ընկերությունը դեբիտորական պարտքերի գծով ճանաչում է պահուստ: Առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվում են՝ որպես նմանատիպ առևտրային պարտքերին բնորոշ ռիսկայնության: Ակնկալվող կորուստի դրույքները որոշվում են՝ հաշվի առնելով Ընկերության նախորդ տարվա կորուստի վիճակագրությունը և հաճախորդների վրա ազդող ընթացիկ և ակնկալվող մակրոտնտեսական ցուցանիշները:

Եթե առևտրային դեբիտորական պարտքերի գծով փաստացի հավաքագրվող գումարները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել էականորեն տարբեր:

Պաշարների իրացման գուտ արժեքը

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, և հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Ինքնարժեքը ներառում է ձեռքբերման բոլոր ծախսումները պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված:

Ղեկավարությունը գնահատում է, որ պաշարների իրացման գուտ արժեքը ցածր չէ 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված դրանց հաշվեկշռային արժեքից:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

5. Հասույթ, վաճառքի ինքնարժեք

Հասույթ

	2025թ	2024թ
Ապրանքների վաճառքներից հասույթ	367 652	377 230
Աշխատանքների կատարումից հասույթ	5 475 454	5 162 424
Ծառայությունների մատուցումից հասույթ	5 843 106	5 539 654

Վաճառքի ինքնարժեք

	2025թ	2024թ
Վաճառված ապրանքների ինքնարժեք	113 697	113 551
	113 697	113 551

6. Ծառայությունների մատուցման գծով ծախսեր

	2025թ	2024թ
Աշխատավարձ	452 397	465 520
Մաշվածություն և ամորտիզացիա	129 128	139 425
Մարկետինգի եւ գովազդի ծախսեր	178 232	146 689
Կոմունալ ծախսեր	577 538	591 474
Կինոթատրոնի ծախսեր	282 017	409 920
Մաքրման ծառայության գծով ծախսեր	150 032	164 182
Պահպանության ծառայության գծով ծախսեր	91 556	95 669
Տեխնիկական սպասարկման ծախսեր	46 971	45 142
Այլ	235 922	116 132
	2 143 793	2 174 153

7. Վարչական ծախսեր

	2025թ	2024թ
Աշխատավարձ	479 339	491 106

Մաշվածություն և ամորտիզացիա
Գործուղման և ներկայացուցչական
Փոստի, հեռահաղորդակցության
Գրասենյակային, կոմունալ
Առդիտորական և խորհրդատվական
Բանկային և ապահովագրության
Զփոխհատուցվող հարկերից ծախսեր
Այլ

269 372	267 854
2 523	3 146
9 624	9 307
3 581	5 458
20 983	21 904
44 535	41 891
99 964	116 627
101 034	108 692

1 030 955

1 065 985

8. Այլ եկամուտներ և ծախսեր

Այլ եկամուտներ

Այլ եկամուտներ

2025թ

2024թ

	-
2 428	
2 428	5 471

Այլ ծախսեր

Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր
Արձակուրդայինի պահուստաֆոնդին հատկացում
Այլ ծախսեր

2025թ

2024թ

4 122	50
-	15 245
5 423	33 244
14 247	5 118
23 792	53 657

9. Ֆինանսական եկամուտներ և ծախսեր Ֆինանսական եկամուտներ

Բանկային ավանդներից տոկոսային եկամուտ

2025թ

2024թ

-	4 642
-	4 642

Ֆինանսական ծախսեր

Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսեր

2025թ

2024թ

125 528	146 833
125 528	146 833

10. Այլ օգուտ (կորուստ)

Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ
Հիմնական միջոցների վաճառքից ծախս
Փոխարժեքային տարբերություններից եկամուտ
Փոխարժեքային տարբերություններից ծախս
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր

2025թ

2024թ

833	-
-	-
82 161	112 026
(17 011)	(66 692)
(16 321)	-
49 662	45 334

11. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են

	2025թ	2024
Ընթացիկ շահութահարկ՝		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	413 713	331 372
Հետաձգված հարկեր		
Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում	71 551	45 235
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	485 264	376 607

Հետաձգված հարկ

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ / (պարտավորություններ)

	Հետաձգված հարկային ակտիվներ		Հետաձգված հարկային պարտավորություններ		Չուտ հետաձգված հարկ	
	2025թ	2024թ	2025թ	2024թ	2025թ	2024թ
Հիմնական միջոցներ	-	-	344 597	289 036	(344 597)	(289 036)
Ոչ նյութական ակտիվներ	-	-	135	943	(135)	(943)
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	7 827	25 601	-	-	7827	25 601
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	41 076	40 100	-	-	41 076	40 100
	49 903	65 701	344 732	289 979	(295 829)	(224 278)

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2024թ դեկտե մբերի 31- ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2025թ դեկտե մբերի 31- ի դրությամբ
Հիմնական միջոցներ	(238 523)	(50 513)	(289 036)	(55 561)	(344 597)
Ոչ նյութական ակտիվներ	(1 257)	314	(943)	808	(135)
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	26 621	(1 020)	25 601	(17 774)	7 827
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	34 116	5 984	40 100	976	41 076
Չուտ հետաձգված հարկ	(179 043)	(45 235)	(224 278)	(71 551)	(295 829)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2025թ		2024թ	
Զուտ շահույթը նախքան հարկումը	2 570 548		2 040 923	
Հաշվարկված շահութահարկ	462 699	18	367 366	18
Զնվագեցվող ծախսեր	22 565	0,9	9 241	0,45
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	485 264	18,9	376 607	18,45

12. Պաշարներ

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք նյութեր	48 483	42 194
Պահեստամասեր	31 717	10 196
Ծինանյութեր	97 628	18 128
Ապրանքներ	29 145	21 325
Այլ	56 800	29 275
	263 773	121 118

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	541 354	684 396
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	(43 481)	(142 420)
Ընդամենը ընթացիկ առևտրային պարտքեր	497 873	541 976
Տրված ընթացիկ կանխավճարներ	114 390	77 330
Դեբիտորական պարտքեր բյուջեին այլ հարկերի և պարտադիր վճարների գծով	15 459	30 101
Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով	-	250
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի վճարման գծով	1 690	6 788
	629 412	656 445

14. Դրամական միջոցներ

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում	250 900	288 606
Կանխիկ դրամը	24 139	9 403
դրամարկդում	275 039	298 009

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բանկում բացված հաշիվներում առկա և հետագայում այդ հաշիվներին մուտքագրվող դրամական միջոցները գրավադրվել են «Արդշինբանկ» ՓԲԸ-ում ստացված վարկի դիմաց, իսկ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում ստացված վարկի դիմաց:

15. Հիմնական միջոցներ

Համախառն հաշվեկշռային արժեք	Շենքեր, հողամասեր	Մեքենա - սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք, արտադրական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
2024թ հունվարի 1-ի դրությամբ	13 000 050	453 378	12 580	1 146 889	2 081 434	16 694 331
Ավելացումներ	27 142	1 695	-	226 018	19 552	274 407
Օտարումներ, դուրս գրումներ	-	(5 023)	-	(21 525)	(10 868)	(37 416)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	13 027 192	450 050	12 580	1 351 382	2 090 118	16 931 322
2025թ հունվարի 1-ի դրությամբ	13 027 192	450 050	12 580	1 351 382	2 090 118	16 931 322
Ավելացումներ	13 361	-	-	77 664	-	91 025
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	(3 644)	-	(3 644)
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	13 040 553	4+0 050	12 580	1 425 402	2 090 118	17 018 703
Կուտակված մաշվածություն						
2024թ հունվարի 1-ի դրությամբ	3 967 451	429 341	1 310	981 791	2 020 245	7 400 138
Տարվա ծախս	280 364	3 578	1 579	71 408	19 466	376 395
Օտարումներ, դուրս գրումներ	-	(5 023)	-	(21 471)	(10 869)	(37 363)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	4 247 815	427 896	2 889	1 031 728	2 028 842	7 739 170
2025թ հունվարի 1-ի դրությամբ	4 247 815	427 896	2 889	1 031 728	2 028 842	7 739 170
Տարվա ծախս	281 042	3 756	1 579	60 577	14 810	361 764
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	(3 644)	-	(3 644)
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	4 528 857	431 652	4 468	1 088 661	2 043 652	8 097 290
Զուտ հաշվեկշռային արժեք						
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	8 779 377	22 154	9 691	319 654	61 276	9 192 152
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	8 511 696	18 398	8 112	336 741	46 466	8 921 413

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության Արշակունյաց պողոտա 34/3 հասցեում գտնվող անշարժ գույքը գրավադրվել «Արդշին բանկ» ՓԲԸ-ում ստացված վարկի դիմաց, իսկ 2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում ստացված վարկի դիմաց

31.12.2025թ 8 511 696 հազար դրամի հաշվեկշռային արժեքով շենքի որոշ մասը տրված է վարձակալությամբ՝ մանրածախ առևտրով և ծառայությունների մատուցմամբ (ներառյալ հանրային սնունդ) զբաղվող կազմակերպություններին, իսկ որոշ մասը օգտագործվում է կազմակերպության կողմից: Քանի որ ներդրումային գույքի բաղադրիչի իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել՝ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, ապա շենքն ամբողջությամբ հաշվառվել է որպես հիմնական միջոց:

16. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Այլ	Օգտագործման համար ոչ մատչելի ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2024թ հունվարի 1-ի դրությամբ	193 956	38 344	1 600	233 900
Ավելացումներ	16 025		1 000	17 025
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	(2 600)	(2 600)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	209 981	38 344	-	248 325
2025թ հունվարի 1-ի դրությամբ	209 981	38 344	-	248 325
Ավելացումներ	14 715	10 994		
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	25 709
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	224 696	49 338		274 034
Կուտակված մաշվածություն				
2024թ հունվարի 1-ի դրությամբ	79 557	31 808	-	111 365
Տարվածախս	25 802	5 082	-	30 884
Նվազեցումներ			-	
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	105 359	36 890	-	142 249
2025թ հունվարի 1-ի դրությամբ	105 359	36 890	-	142 249
Տարվա ծախս	30 145	6 591		36 736
Նվազեցումներ	-	-		-
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	135 504	43 481		178 985
Զուտ հաշվեկշռային արժեք				
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	104 622	1 454	-	106 076
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	89 192	5 857	-	95 049

17. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռքբերելու համար		844
Ընդամենը		844

18. Վարկեր և փոխառություններ

Ոչ ընթացիկ

Երկարաժամկետ վարկեր
Երկարաժամկետ փոխառություններ

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 3 ի դրությամբ
	1 132 418	1 471 9
	-	
	1 132 418	1 471 9

Ընթացիկ

Կարճաժամկետ վարկեր
Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս

	-	
	283 104	290 7
	283 104	290 7
	1 415 522	1 762 6

19. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 3 ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	146 573	136 360
Ստացված կանխավճարներ	19 488	18 341
Պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով	405 252	357 996
Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	4 306	3 801
Հատուցումներ աշխատակիցներին	706	1 731
Շահաբաժինների գծով կրեդիտորական պարտք	-	478 553
Այլ կրեդիտորական պարտք	1 315	942
	577 670	997 724

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

Հարկերի և պարտադիր վճարների գծով կրեդիտորական պարտքը բաղկացած է հետևյալից՝

	2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շահութահարկ	301 393	243 594
Եկամտային հարկ	26 674	26 397
Ավելացված արժեքի հարկ	75 359	86 540
Այլ	1 826	1 465
	405 252	357 996

Վարձակալական վճարների գծով ոչ ընթացիկ կանխավճարները 2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 106 986 հազար դրամ, իսկ 2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 86 271 հազար դրամ: Այն իրենից ներկայացնում է վարձակալական վճարի վերջին ամսվա գումարը, որը Ընկերության կողմից գանձվում է վարձակալության պայմանագիրը կնքելու ժամանակ:

20. Պահուստներ

Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ

2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
228 201	222 778
228 201	222 778

21. Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 156 674 000 (հարյուր հիսունվեց միլիոն վեց հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է 2 170 (երկու հազար հարյուր յոթանասուն) հատ բաժնեմասից, մեկ բաժնեմասի արժեքը կազմում է 72 200 (յոթանասուներկու հազար երկու հարյուր) ՀՀ դրամ: Բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը առաջացել է բաժնեմասերի անվանական արժեքից ավելի բարձր գումարով տեղաբաժինման արդյունքում:

Պահուստային կապիտալ

Ընկերությունը կուտակված շահույթի հաշվին պետք է ստեղծի պահուստային կապիտալ, որը կարգավորված է Ընկերության կանոնադրությամբ: Այն օգտագործվելու է վնասների ծածկման, շահաբաժինների վճարման և կանոնադրական կապիտալի ավելացման նպատակներով:

Ընկերությունը 31.12.2025թ. և 31.12.2024թ. դրությամբ պահուստային կապիտալի համալրում չի կատարել:

22. Իրական արժեք և Ռիսկերի կառավարում

Իրական արժեք

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը ֆինանսական հաշվետվություններում: Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում է շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):

Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից:

Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն գգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում:

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Ընկերության ղեկավարությունը իրականացնում է վերահսկողություն այդ ռիսկերից յուրաքանչյուրի գծով, որն ամփոփված է ստորև:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտավորությունները Ընկերության նկատմամբ, և այն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերից: Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող պայմանագրային կողմերի համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը.

	2025թ	2024թ
Առևտրային դեբիտորական պարտքեր՝ գուտ	497 873	541 976
Բանկային ավանդներ	70 000	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	275 039	298 009
	842 912	839 985

Պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր պատվիրատուի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև պատվիրատուների բազայի կառուցվածքը, ներառյալ պատվիրատուների արդյունաբերության ճյուղերի ու երկրների դեֆոլտի ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ պարտքային ռիսկի վրա, հատկապես ներկայիս տնտեսական պայմաններում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու: Որպես կանոն, Ընկերությունը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը 60 օրվա ընթացքում ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չի կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

Ստորև ներկայացված է տեղեկատվություն 2025թ և 2024թ դեկտեմբերի 31-դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերլուծությունը՝ ըստ ակնկալվող մարման ժամկետների

2025թ.

	Ցպահանջ	մինչև 1 տարի	1-5 տարի	Ընդամեն
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր՝ գուտ		497 873		497 873
Բանկային ավանդներ		70 000		70 000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	275 039			275 039
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	275 039	567 873	-	842 912
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	-	283 104	1 132 418	1 415 522
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	146 573	-	146 573
	-	429 677	1 132 418	1 562 095
Զուտ	275 039	138 196	(1 132 418)	(719 183)

2024թ.

	Ցպահանջ	մինչև 1 տարի	1-5 տարի	Ընդամեն
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտք՝գուտ		541 976		541 976
Դրամականմիջոցներևդրանցհամարժեքներ	298 009			298 009
Ընդամենըոչածանցյալֆինանսականակտիվներ	298 009	541 976	-	839 985
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	-	290 702	1 471 941	1 762 643
Առևտրային կրեդիտորական պարտքեր		136 360	-	136 360
Ընդամենըոչածանցյալֆինանսականպարտավորություններ	-	427 062	1 471 941	1 899 003
Զուտ արդյունք	298 009	114 914	(1 471 941)	(1 059 018)

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը բաղկացած է երկու տեսակի ռիսկերից՝ տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի ռիսկերից: Շուկայական ռիսկի ներգործությանը ենթարկված ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրած փոխառությունները, առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը:

ա) տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է՝ շուկայական տոկոսադրույքի փոփոխության հետևանքով:

Ընկերությունը չունի պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր տոկոսադրույքների ռիսկերի կառավարման համար, քանի որ Ընկերությունը չունի լողացող տոկոսադրույքներով փոխառում միջոցներ: Ղեկավարությունը այդ ռիսկը համարում աննշան Ընկերության բիզնեսի համար:

բ) արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և փոխառությունների հետ:

Արտարժույթային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև:

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է՝ շուկայական տոկոսադրույքի փոփոխության հետևանքով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև:

2025թ.	ԱՄՆ դոլար՝<< դրամով վերահաշվարկված	Եվրո՝<< դրամով վերահաշվարկված
Դրամական միջոցներ	-	-
Վարկեր և փոխառություններ	(1 415 522)	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	-
Զուտ արդյունք	(1 415 522)	-

2024թ.

Դրամական միջոցներ	11 553	-
Վարկեր և փոխառություններ	(1 762 642)	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	(9 079)	(572)
Զուտ արդյունք	(1 760 168)	(572)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և ՌԴ ռուբլու նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է:

Շահույթ կամ վնաս

2025թ.

ԱՄՆ դոլար(10% ամրապնդում) (141 552)

2024

ԱՄՆ դոլար(10% ամրապնդում) (176 017)

23. Պայմանականություններ

Գործարար միջավայր

Ընկերությունը իր գործունեությունը իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն է ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները:

Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ՝ ենթարկվելով մի քանի մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022թ փետրվարից Ռուսաստանի Դաշնության և ՌԲ կրպինայի միջև ռազամական հակամարտության պատճառով մի շարք երկրներ պատժամիջոցներ սահմանեցին ՌԴ դեմ, որը ազդում է ոչ միայն երկու երկրների տնտեսական ակտիվության վրա, այլև համաշխարհային տնտեսության վրա: Պատժամիջոցների հետևանքով աշխարհի շատ երկրներում ապրանքների գները բարձրացել են, ռեսուրսների մատակարարման միջև հաստատված կապերը խաթարվել են, ինֆլացիան նույնպես ազդում է գների վրա, և վերլուծաբանները նաև կանխատեսում են տնտեսական հետևանքներ համաշխարհային տնտեսության համար:

Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի նաև Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, քանի որ Ռուսաստանի Դաշնությունից ոչ միայն դրամական միջոցների հոսքեր կան դեպի ՀՀ: այլև զբոսաշրջիկների ամենամեծ հոսքը: ՌԴ-տի տարածաշրջանում քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը, գնաճը և ՌԴ առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասաբար անդրադառնալ ՀՀ տնտեսության վրա:

Հայաստանի տնտեսությունը հաջողությամբ դիմակայել է համաշխարհային տնտեսական ցնցումներին և կարողացել է վերջին տարիներին գրանցել տպավորիչ մակրոտնտեսական ցուցանիշներ՝ հիմնականում մի շարք ընկերությունների գործունեությունը Հայաստան տեղափոխվելու և դրա հետևանքով դրամական փոխանցումների նշանակալի աճի շնորհիվ:

Այսպիսի գործարար միջավայրն էական ազդեցություն ունեն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այնուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից, ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը, բացառությամբ շենքի և տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությանն պարտադիր ապահովագրությունից իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասից ապահովագրություն չունի:

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժույթային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Ընկերությունը գտնում է, որ համապատասխան պետական կարգավորող մարմինների կողմից մեկնաբանությունները կարող են ազդել Ընկերության գործարքների և գործունեության վրա: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով, որի արդյունքում հնարավոր է, որ այն գործարքների և գործունեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնց նախկինում հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը, տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Ընկերությունը գտնում է, որ 2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Ընկերության հարկային, արժույթային և մաքսային դրությունը կայուն է:

Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի խոշոր դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

24 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Վերահսկողություն

Ընկերության կապակցված կողմեր են հանդիսանում են հանդիսանում նրա բաժնետերերը և Ընկերության տնօրենը: Ընկերության և նրա հետ փոխկապակցված անձանց միջև գործարքների մանրամասները բացահայտված են ստորև:

Գործարքներ ղեկավարության հետ

Վերահսկողություն

Ընկերության կապակցված կողմեր են հանդիսանում են հանդիսանում նրա բաժնետերերը և Ընկերության տնօրենը: Ընկերության և նրա հետ փոխկապակցված անձանց միջև գործարքների մանրամասները բացահայտված են ստորև:

	Մնացորդը 31.12.2024թ	Գործարքի արժեքը գուտ 2025թ	Մնացորդը 31.12.2025թ
Տնօրենին վճարված աշխատավարձ			
Սեկոյան Վազրիկ	-	99 296	-

25 Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո Ընկերությունը հայտարարագրել է միջանկյալ շահաբաժիններ 840,000 հազ. ՀՀ դրամի չափով: